ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

14.03.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 212-Ա

«ՄԱՆԱՍՅԱՆ» ՊԱՐԱՅԻՆ ՍՏՈՒԴԻԱՅԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետով, 46-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Մինորա» մշակութային կենտրոնի տնօրեն Ռ. Աբրահամյանի 05.02.2025թ-ի հրավերն ու «Մանասյան» պարային ստուդիայի գեղարվեստական ղեկավար Մանուշ Մանասյանի 12.03.2025թ.-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ապահովել «Մանասյան» պարային ստուդիայի երեխաների մասնակցությունը 2025թ.-ի մարտի 16-ին Երևան քաղաքի պատանի հանդիսատեսի թատրոնում նախատեսվող հայրենասիրական համերգային ծրագրին՝ կազմակերպելով մասնակիցների /17 անդամ/ ուղևորափոխադրումը Գորիս-Երևան-Գորիս ուղղությամբ:
2. Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. մարտի 14
ք. Գորիս